«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց եկեղեցու պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հերմինե Ասկիջյան

Ուսումնական հաստատություն՝ Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ 1. ‹‹Սասնա ծռեր›› էպոսը՝ որպես ազգային ոգու վավերաթուղթ և ազգային կտակարան……...5

Գլուխ 2. ‹‹Սասնա ծռեր›› էպոսի հերոսները՝ որպես հայրենասիրության և ազգային արժեքների կրողներ…14

Եզրակացություն.....20

Օգտագործված գրականություն.....21

Ներածություն

Աշխատանքի արդիականությունը: Գաղտիք չէ ,որ աշխարհը զարգանում է անասելի արագությամբ, և պետք է համահունչ քայլել այդ զարգացման հետ : Համաշխարհայնացումը (գլոբալացումը) աշխարհի արդի վիճակը բնութագրող կարևոր և էական գործընթացի անվանումն է: Այն տանում է տարբեր պետությունների ու ժողովուրդների առավել լայն համագործակցության: Արդի հասարակությունը իրավամբ կարելի է կոչել տեղեկատվական հասարակություն: Համաշխարհայնացման հիմքում համացանցն է՝ իր լրատվական անսպառ հնարավորություններով: Դրական կողմերը շատ են, բայց միայն դրանով չէ գործընթացը բնութագրվում՝ «… այս երևույթն ունի նաև բացասական հետևանքներ: Այն կարող է տանել դեպի ազգային արժեքների և մշակույթների համահարթեցում»[1]:

Հայաստանի Հանրապետությունը ևս, իբրև մեծ աշխարհի լիիրավ քաղաքացի, այսօր գտնվում է այդ բարդ գործընթացի զարգացման կիզակետում: Դա հնարավորություն է տալիս մեզ աշխարհի երթից հետ չմնալ, աշխարհին համաքայլ զարգացնել մեր պետական տարբեր ոլորտները(տնտեսություն, քաղաքականություն , մշակույթի տարբեր ոլորտներ), բայց մենք այդ պարագայում կանգնում ենք լուրջ մարտահրավերի առջև՝ «ինչպես նոր պայմաններում պահպանել և զարգացնել ազգային արժեհամակարգը»[2]:

Համաշխարհայնացումը հեշտ ընթացող գործընթաց չէ: Դրա դեմ ուղղված լուրջ շարժում կա և՛ արևմուտքում, և՛ արևելքում, ընդ որում՝ երկուստեք փորձում են համաշխարհայնացման դեմ իրենց պայքարում հենվել կրոնի և վերջինիցս բխող արժեքների վրա , որով հնարավոր կլինի պահպանել սեփական ինքնությունը : Եթե արևելքում խոսքը իսլամի, բուդդայականության, հինդուիզմի մասին է, ապա արևմուտքում այդպիսի փրկարար հենք է քրիստոնեական կրոնը՝ իր հոգևոր արժեքներով : Մենք ևս մեր ազգային ինքնությունը պահելու համար պետք է ապավինենք մեր հավատին և ազգային այլ արժեքներին:

Աշխատանքի նպատակը: Մենք մեր այս աշխատանքում համեստ փորձ ենք արել ինչ-որ չափով բացահայտելու «Սասնա ծռեր» էպոսում խտացված այն ամբողջ հոգևոր մագման,որը ոչ անիրավացի կերպով կարելի է կոչել ազգային արժեհամակարգ: Փորձել ենք գտնել էպոսում առկա և քրիստոնեական հավատին առնչվող կարևոր տարրեր ու մոտիվներ: Փորձ է արվել ,քրիստոնեական հավատին առնչվող հարցերը միահյուսելով արժեքային այլ հարցերի հետ , հնարավորինս ամփոփ պատկերացում կազմել հայ ժողովրդին բնորոշ արժեհամակարգի մասին:

---

[1] Ա. Ստեփանյան, Ա. Նազարյան, Ռ. Սաֆրաստյան, Համաշխարհային պատմություն. նորագույն շրջան, Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, 9-րդ դասարան, Մաս 2, Երևան, 2019, էջ 149:
[2] Նույն տեղը:

Աշխատանքի կառուցվածքը՝ Մեր աշխատանքը բաղկացած է երեք մասից՝ նե - բածությունից և երկու գլուխներից։ Երկու գլուխներն են՝ 1. ‹‹Սասնա ծռեր›› էպոսը՝ որպես ազգային ոգու վավերաթուղթ և ազգային կտակարան, 2. ‹‹Սասնա ծռեր›› էպոսի հերոսները՝ որպես հայրենասիրության և ազգային արժեքների կրողներ։ Աշխատանքը ամբողջացված է «Եզրակացություն» բաժնով։ Վերջում տրված է օգտագործված գրականության ցանկը։

Գլուխ 1.
«Սասնա ծռեր» էպոսը՝ որպես ազգային ոգու վավերաթուղթ և ազգային կտակարան

«Սասնա ծռեր» էպոսը մեր ազգային-քրիստոնեական արժեհամակարգի կարևորագույն բաղադրիչներից է։

Ս. Հակոբյանը գրում է. «Արժեքը մարդու հասարակական պատմական գործունեության համակարգում այս կամ այն երևույթի դրական նշանակությունն է, արժեքավորությունը ու գործառույթը» [3]: Հեղինակը խոսում է այն մասին, որ արժեքները վերջնական տրված չեն իբրև այդպիսին. մի դարաշրջանի արժեքային համակարգը կարող է արժեքային բովանդակություն չունենալ մեկ այլ դարաշրջանի համար: Արժեքների մասին անհատների ունեցած պատկերացումները ևս կարող են տարբեր լինել. մեկի համար արժեք հանդիսացողը կարող է մյուսի համար որպես այդպիսին չընկալվել և խորթ լինել[4]: Ինչ վերաբերում է «Սասնա ծռեր» էպոսին, ապա կարող ենք ասել, որ այն մնայուն և անանց արժեք է:

Մեր էպոսը, որ իր գաղափարական տիրույթում կրում է խաչի փրկարար խորհուրդը, մշուշոտ դարերի խորքից մեզ է հասել բանավոր խոսքի ուժով և ստացել լինելիության գրավոր իրավունք, ազգային խորհրդանիշների ավիշ հայոց այբուբենով է արձանագրվել։ Ուրեմն՝

Էպոս----խաչ----խոսք (հետևաբար՝ լեզու)----գիր։

Սրանք հայոց ազգային արժեհամակարգում, իհարկե, պատմական, ազգային-պետական հատկանիշներ կրող խորհրդանիշներ են, բայց կրում են նաև բարոյա-կերպարային հատկանիշներ[5]:

Գրականությունը մարդկության հոգևոր ժառանգության գանձարանում ունի իր անուրանալի տեղը: Տաղանդների ու հատկապես հանճարների թողած ժառանգությունը մեզ ուղեկից է ու աջակից, բայց այդ տեղը, որը ապահովել են շատերը, մի աստիճան ցածր է այն բարձունքից, որտեղ աշխարհի էպոսներն են: Իսկ էպոսները շատ չեն, և քիչ ազգեր են իրենց ծոցից հանել հանճարեղության այդ գոհարները: Ուրեմն այդ սակավաթիվ երջանիկ ազգերից ենք և մենք՝ հայերս՝ մեր էպոսով: Գրականությունը անհատների մտավոր հղացումն է, էպոսը՝ ազգային ոգու վավերաթուղթը և ազգային կտակարանը՝ ծնված ժողովրդի իմաստությունից ու դարավոր կենսափորձից: Գրական արժեքները կարող են հնանալ, կարող են ստանալ զուտ պատմական արժեք, իսկ էպոսները երբեք չեն հնանում, քանի որ ժողովրդի իմաստությունը չի կա-

[3] Ս. Հակոբյան, Փիլիսոփայության դասընթաց, Երևան, 2005, էջ 201:
[4] Տե՛ս Ս. Հակոբյան, Նույն տեղում, էջ 202:
[5] Տե՛ս, Հայոց եկեղեցու պատմություն, Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2013, էջ 125-126:

բող կրել պատմականության փոշին, այն մշակութաբանական արժեքների խտացում ունի: Սա է փաստում մեր էպոսի «ավարտը»:

Եվս մեկ անգամ փաստենք: Էպոսները հանճարների գործերից վեր են և մոռացության փոշին նրանց գոյությանը սպառնալ չի կարող: Եթե մոռանաս էպոսի դասերը, կկորչես իբրև ազգ: Ազգերի խաղի ժամանակ պատմության բեմում խոսքդ պիտի լավ հիշես: Եթե մոռանաս խոսքդ, կմոռացվես իբրև խաղացող: Դա էպոսի խոսքն է, էպոսի դասը, էպոսի խրատը: Եթե սովորել ես դասդ, բեմը քոնն է, շարունակի՛ր հաղթությունդ, եթե չես սովորել, ուրեմն՝ մնա՛ս բարով: Ուրեմն՝ էպոսը մեզ է հասել խոսքով ու մեզ է պատգամում իր խոսքը: Դա ազգայինը պահելու ուղերձն է : Այսպիսով՝ «Սասնա ծռեր» ազգային կտակարանի խրատաբանությունը սերտելը և պահելը մեր հետագա լինելիության ամուր գրավականն է և զորեղ հիմքը:

Ուրեմն՝ էպոսը ազգային կնիք ունի և ազգային դրոշմ: Այլ կերպ լինել պարզապես չէր կարող: Մեր էպոսի դեպքում ավանդույթը հատկապես չպիտի խախտվեր, որովհետև այն (էպոսը) մեր պատմական ժամանակի արձագանքն է, 8-10 դդ. արաբական արշավանքների փոթորկալից շրջանում հայ ազգի մղած հերոսական պայքարի և ազատություն նվաճելու նրա կուռ վճռականության գեղարվեստական մարմնավորումը: Սա էպոսի պատմական ժամանակն է, բայց սրանով ժամանակի հարցը չի փակվում:

Ազատասիրությունը մեր ազգածագման հիմքն է ու գնում է դեպի առասպելական անցյալ:

«Ազատությունն ի սկզբանե եղել է հայ մարդու աշխարհընկալման հիմքը, առանցքը: Դեռ Հայկ Նահապետի ժամանակներից հայ ժողովուրդը որդեգրել է ազատ, ինքնուրույն ապրելու գաղափարը»[6]:

Հ. Թումանյանը ուշագրավ դիտարկում է անում. «Հայկական էպոսը հայտնի է Սասունցի Դավիթ կամ Սասմա ծռեր (Սասունի խենթեր) անունով: [Բայց ամեն մի լուրջ բանասերի համար պարզ է, որ դա Հայկի առասպելն է]»[7]:

Բանահյուսական տարբեր ժանրերի մեջ Թումանյանն առանձնապես կարևորում է էպոսի և հեքիաթի ժանրերը: Նա տևական հետաքրքրություն է ունեցել էպոսի նկատմամբ: Այդ են վկայում էպոսին նվիրված նրա բազմաթիվ հոդվածները («Ազգերի պատերազմն ու իրենց դյուցազունները», «Երկու բառ հայոց էպոսից», «Մի երկու խոսք սերբ ժողովրդական էպոսի մասին», «Հսկայի ազատությունը» և այլն), ինչպես նաև «Հայկական էպոսի բառարանից» անավարտ ուսումնասիրությունը:

Հ. Թումանյանը իր «Հայկական էպոսի բառարանից» ուսումնասիրության մեջ գրում է. «Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունը աշխարհքի առջև»[8]:

---

[6] Նույն տեղը, էջ 59:
[7] Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, Հատոր ութերորդ, Երևան, 1999, էջ 255:
[8] Նույնը, էջ 254:

Ամենայն հայոց բանաստեղծը, նկատի ունենալով էպոսը, նշում է . «Նա ընդգրկում է ժողովրդի կյանքի ամբողջությունը սկզբից մինչև վերջը և ստեղծում է էն բարոյագաղափարական աշխարհքը, ուր անձնավորվում ու կենտրոնանում են ամբողջ ժողովրդի դարավոր մաքառումներն ու հեռավոր իդեալները, բոլոր հոգեկան ու բարոյական կարողությունները»[9]:

«Սասնա ծռեր» էպոսը ոչ միայն ազգային, այլև համամարդկային արժեք է, որովհետև այն ընդունում են նաև այլ ազգերը: Ասվածի լավագույն ապացույցն այն է, որ «Սասնա ծռեր» էպոսը էպոսների միջազգային մրցույթում, որը կայացել է 1964 թ., զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը: Այս հարցի առնչությամբ Հ. Թումանյանը գրում է. «Բայց ավելի ևս մեծանում է հենց ազգային կոչված էպոսի նշանակությունը նրանով, որ նա միաժամանակ գերազանցորեն հանրամարդկային ստեղծագործություն է:

Հայկական էպոսն էլ թեև պատմական տարրեր ունի իր մեջ, թեև իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի մեծ մաքառումներն ու մեծ իդեալները, բայց ամենից առաջ նա մի հանրամարդկային ստեղծագործություն է, դյուցազնական ու սիմվոլիկ, մի հավաքական գործ, որի վրա աշխատել են ոչ միայն որոշ ազգի անհատները, այլև բոլոր ազգերը՝ իբրև անհատներ:

Էս պատճառով էլ սխալվում են մեր էն բանասերները, որ հայոց պատմության բանալիով են ուզում բաց անել հայկական էպոսի մեծ փականքը կամ ազգային ճրագով են ուզում լուսավորել նրա մութ անկյունները, ենթադրելով թե նա էս կամ էն հայ իշխանի կամ թագավորի ապարանքն է[10]: Մինչդեռ նա հսկայական մի աշխարհք է, ուր ամենքն ունեն իրենց հայրենիքը, և նրան լուսավորում է արեգակը»[11]:

Պետականության հիմքում ազատության գաղափարն է: Պետականությունը կերտում են անկախություն նվաճելով, անկախությունը նվաճում են ազատության ձգտելով: Իսկ ի՞նչ է ազատությունը: «**Ազատությունը** ազգերի և մարդկանց ինքնուրույն ապրելու, արարելու բնական և անօտարելի իրավունքն է: Այն նաև համամարդկային արժեք է: Ազատության ձգտումը բնորոշ է աշխարհի բոլոր ժողովուրդներին, և դժվար է պատկերացնել քաղաքակրթությունների զարգացումն առանց մարդկանց և ազգերի ազատ գոյության»[12]: Այո՛, մեր էպոսի հերոսները ազատատենչ են: Դրա մասին շատ է գրվել և խոսվել, ուստի մենք մեր աշխատանքում շեշտը դրել ենք մեր ազգային արժեհամակարգին բնորոշ այլ հատկանիշների վրա, որոնք մեր համեստ կարծիքով նվազ ուշադրության են արժանացել:

«Ժամանակակից ազգերի պատմությունը ցույց է տալիս, որ այս կամ այն ազգի միասնական և ամբողջական արժեհամակարգի ձևավորման մեջ վճռական դերա-

[9] Նույնը, էջ 256:
[10] Գրականագետ Ժենյա Քալանթարյանը գտնում է, որ Հ. Թումանյանը, բանասեր ասելով, նկատի ունի մեր մեծ գրականագետ, լեզվաբան, էպոսագետ Մ. Աբեղյանին:
[11] Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, Հատոր ութերորդ, Երևան, 1999, էջ 274:
[12] Հայոց եկեղեցու պատմություն, Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2013, էջ 59:

կատարություն են ունեցել ազգային-հոգևոր կառույցները։ Այսպես է եղել, օրինակ, **հրեաների, արաբների, եվրոպական բազմաթիվ ժողովուրդների կյանքում** և այլն»[13]։ Այդպես է և հայերիս պարագայում։

Հ. Թումանյանը նշում է «Սասնա ծռեր» էպոսը բնութագրող մի քանի կարևոր հատկանիշներ.

1. Հունական «Իլիական» էպոսի և, առհասարակ, էպոսների մեծ մասի գլխավոր մոտիվը կինն է, կռիվը կնոջ համար։ Մեր «Սասնա ծռեր» էպոսի գլխավոր մոտիվը կռիվն է բռնության, չարի դեմ։
2. Հայ ժողովրդին վտանգ սպառնացել է հարավից։
3. Հայ դյուցազունը սուրը բարձրացնում է միմիայն բռնակալի դեմ, բայց երբեք ժողովրդի դեմ սուր չի բարձրացնում։
4. Ընտանիքի կամ օջախի սերն ու պաշտամունքը։
5. Աշխատանքը և աշխարհաշինությունը[14]։

Արմաղանը երդվել էր, որ Միհրը քառասուն տարի իր ծոցը չպիտի մտնի, բայց տեղի է ունենում երդմնազանցություն՝ հանուն Սասնա օջախի պահպանության։

Միհր ասաց.—Աստված թող մեկ տրղա տա մեզ,
Էրթա Մելիքի օձիք բռնի,
Թող չը հանգչի Սասնա ճրագ, [15]

Այս հատվածն ապացուցում է, որ օտարը և յուրայինը ոչ միայն արյան տարբերությամբ է որոշվում, այլև «սեփական» և «օտար» աշխարհագրությամբ։ «Օտար» հողում օտարից ծնված արյունակիցը Սասնա օջախի համար խորթ է և յուրային չէ ։

Էպոսը փաստում է , որ աշխարհի բարեկեցության հիմքը աշխատանքն է («Աշխարհ գութանի մոտ կը լիանա»)։ Հերոսացումը ռազմի դաշտում արժանի է գովասանքի, բայց էպոսը ընդգծում է նաև հերոսացումը խաղաղ և ստեղծագործական աշխատանքի մեջ։ Սրա պատճառն այն է, որ մեր ազգային բնութագրի մեջ կա աշխատասիրության երանգը, բայց չկա նվաճողի մասին պատկերացումը, իսկ հերոսացումը ռազմի դաշտում սեփականը և թանկը պաշտպանելու անհրաժեշտությունից է ծընվում, ոչ թե ուրիշինը զավթելու, ուրիշին ստրկացնելու մոլուցքից է առաջանում ։ Այլ կերպ լինել պարզապես չէր կարող. ուրիշինը զավթելով չեն հերոսանում։ Սասնա հերոսներին նկատի ունենալով՝ Գր. Գրիգորյանը տալիս է նրանց սպառիչ բնութագիրը. «Նրանք ազատության ու խաղաղության հերոսամարտիկներ են»[16]։

---

[13] Նույնը, էջ 8-9։

[14] Տե՛ս Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, Հատոր ութերորդ, Երևան, 1999, էջ 257։

[15] Հայ ժողովրդական հերոսավեպ. Սասունցի Դավիթ, Երևան, 1981, էջ 123։ Հետայսու այս գրքից մեջբերումներ անելիս տեղում կնշվի էջը։

[16] Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980, էջ 229։

«Սասնա ծռեր» էպոսը հայ ազգի ձեռքում հաղթաթուղթ է, որը «պետք է ուղեկցի հայ մարդուն ողջ կյանքում»[17], իսկ հայ մարդու կյանքը վախճան չունի, ինչպես վախ – ճան ունի նույն հայի ծոցից դուրս եկած Սասնա վերջին դյուցազունը։ Հենց սա նկատի ունի Գր. Գրիգորյանը, երբ գրում է. «Փոքր Միհրը հայ ժողովրդի անմահության … ու հաղթանակի սիմվոլն է»[18]։

Աշխարհի հիմքում տարբեր մտածողների կարծիքով տարբեր տարրեր են առ - կա։

Հին հունական փիլիսոփայության ակունքներում կանգնած Թալեսը (Ք.ա. 624-547) գտնում էր , որ բոլոր իրերի հիմքում ջուրն է. «Ամեն ինչ առաջանում է ջրից և վերադառնում է ջրին»։ «Սասնա ծռեր»-ում ջուրը կարծես էպոսի հյուսվածքը եզերող պատնեշ լինի, որի սահմաններում ծավալվում է սյուժեն՝ իր գաղափարական լուրջ հարցադրումներով։

Ծովինարը աղջիկների հետ գնում է զբոսանքի։ Նրանցից բաժանվելուց հետո՝
Ինք ու քեռմեր ծովու պռուկ նստան, լացին։ (9)
Ծարավում են։ Ծովի ջուրը աղի էր։
Էն ժամանակ Ծովինար ասաց.
—Աստված, դու մեկ աղբուր էստեղ բուսցես,
Մեկ էլ ինձի մեկ լուս ու ճար անես։
Աստուծու հրամանով, ծովըն բացվավ,
Մի շատ համեղ ջուր դուրս էկավ։ (9)

Սանասարը և Բաղդասարը գնում են ծովի խորքից իրենց համար ձի բերելու։ Սանասարը տալիս է Աստծու անունը և իրեն գցում ծովը։ Ծովը Աստծու հրամանով բացվում է։ Սանասարը ծովի խորքում տեսնում է Ծովային ձին՝ Քուռկիկ Ջալալին , որին ամրացված էր Թուր Կեծակին, տեսնում է մի եկեղեցի, որտեղ մտնելուց հետո ուշքը գնում է։ Երազում Մայր Աստվածածինը նրան հուշում է սպառազինվելու և հզորանալու կերպը։ Սանասարը զարթնում է, դարբասի մոտի լողավազանում լողա- նում, աղբյուրի ջրից խմում է և քնում։

Քնեց մի քիչ , աստծու շնորհք առավ,
Ջոջացավ, զորացավ, կտրրճացավ,
Լցվավ, դարձավ հրեղեն։ (40)
Սպառազինությունը իր հագով է արդեն լինում։
Յոթ ծունր աղոթք արավ,
ԶԹուր Կեծակին կապեց վեր իր։
Հրեշտակները ըզԽաչ Պատերազմին

[17] Հայոց եկեղեցու պատմություն, Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2013, էջ 128։
[18] Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980, էջ 229։

Դրին վեր աջ թևին,
Որ դարբ չառնի * Սանասարին։ (40)
* Դարբ-զարկ, հարված։

Դավթի՝ Մելիքի դեմ կռվից առաջ սգահան եղած Դեղձուն Ծամը Քուռկիկ Ջա - լալուն ասում է, որ Դավիթին տանի Միերի Կաթնաղբյուր, որպեսզի Դավիթը ջուր խմի։ Դավիթը խմում է, հզորանում։ Ջուրը նաև վերքեր բուժելու հատկություն ուներ։

Միերի ձիու ջուրը Վանա քարից կաթում է ուրբաթից ուրբաթ։ Ճամփորդները ուրբաթ օրերին լսում են Քուռկիկ Ջալալու խրխնջոցը այդ քարից։

Հայոց լեռներն են ծնում այն ուժը, որը , փոխանցվելով ջրին, այն դարձնում է դյուցազնածին։ Էպոսը փաստում է մեզանում ջրի պաշտամունքի երբեմնի գոյության հանգամանքը։ Հեթանոսությանը բնորոշ այս հանգամանքը էպոսում հանճարեղ կեր - պով զուգադրվում է խաչի պաշտամունքի և, առհասարակ, քրիստոնեական դավա - նանքի հետ։

Կապույտ բերդի հայոց Գագիկ թագավորը հիշվում է խաչապաշտ որոշիչով, իսկ Խալիֆան՝ կռապաշտ։

Երբ որոշվում է, որ Ծովինարին պետք է տալ Խալիֆային, որպեսզի կռվից խու - սափել լինի, Ծովինարը դիմում է հորը.
Հա՛յրիկ, դու էլ մեկ քահանա դիր հետ ինձ,
Որ առավոտ, իրիկուն ժամ ասի,
Ես իմ աղոթք անեմ, մնամ մեր օրենքով. (7)

Սանասարի և Բաղդասարի ծնվելուց հետո՝
Մելքիսեթ քահանան էկավ,
Թոնդրան վերա կնքեց.
Ջոջ տղի անուն էդիր Սանասար,
Պստիկին՝ էդիր Բաղդասար։ (11)

Երբ տղաները դարձան հինգ-վեց տարեկան,
Մերն ասաց քահանային.—Տե՛ր տեր,
Իմ տղաներին դաս տուր՝ կարդան։
Դաս էտու տղաներին.
Էնոնք գրել-կարդալ սովորեցին։ (13)

Գագիկ թագավորից ջարդ ուտելով՝ Խալիֆան իր կուռքերին է օգնության կանչում, բայց

Կոքեր օգնության չեն հասնի։—
Ախըր կուռք ի՞նչ է, որ օգնության գա։— (20)
Այստեղ երևում է մեր ժողովրդի վերաբերմունքը քրիստոնեական դավանանքին խորթ ամեն պաշտամունքի նկատմամբ։

Ծովինարը երազում տեսնում է, որ իր զավակներին վտանգ է սպառնում, զգուշացնում է նրանց։ Վերջիններս, ապավինելով իրենց աստծուն, փախչում են։

Իրենց բերդը կառուցելու ժամանակ ևս ապավինում են իրենց հավատին.
Ձեռ իրար տվին, աստված կանչեցին, (26)

Սանասարը Աստծուն է ապավինում գործը սկսելիս, իր ապագա կնոջ համար փորձությունների գնալուց առաջ աղոթում է Աստծուն։

Մեծ Միհրը իր հոր՝ Սանասարի նման աստվածապաշտ է, օրինակ՝ Սպիտակ Դևին հաղթելու համար պետք է սպաներ սև եզանը, Միհրը ասում է իր աղոթքը, քաշում է Թուր Կեծակին, սպանում է։

Իսմիլ խաթունը շատ ուղղակի հայտնում է Միհրին իր հրավերի պատճառը, այն է՝ Միհրի հետ կենակցելը։ Միհրի բերած մերժողական պատճառաբանությունը պարզորոշ ցույց է տալիս քրիստոնեական հավատին հավատարմությունը։ Կարծես թե ընտանեկան հավատարմության հարցը չկա, բայց առաջինը , բնականաբար, պայմանավորում է նաև երկրորդը.
—Էտա չէլա՛ծ բան է,— ասաց Միհր։
Ի՞նչպես կարնամ ես քո գողենք* մտնի.
Դու անօրե՛ն ես, ես՝ քրիստոնյա։ (119)
*գողենք-անկողին։

Մարութա բարձր Աստվածածին վանքը կառուցել էր Մեծ Միհրը, բայց վերջինիս մեռնելուց հետո Մըսրա Մելիքը ավերում է։ Դավիթը երդվում է վանքը շինել, որ մեջը պատարագ մատուցվի.
Թե որ չը շինե՛մ ես էս վանք՝
Իմ ուխտի տակ կը մեռնեմ. (189)
Վանքը վերաշինվում է։ Հետաքրքիր է շարունակությունը։ Դավթի երազում վանքը ասում է, որ իր հիմքում Դավթի թուրը պիտի լինի, պիտի պատարագ մատուցվի, և այդ դեպքում միայն վանքը հիմքի վրա կմնա։ Ստիպված են լինում նորից շինել , որովհետև վանքը անհետացել էր՝ քարը, ավազը , մնացած շինանյութը իր տեղն էր վերադարձել։
Սա զենքի և հավատի միասնության այն էական հանգամանքն է , որը կա նաև մեր միջնադարյան մանրանկարներում։ Ուշագրավ է հայ մարդու էությունը ճշմարիտ

կերպով մարմնավորող այն պատկերը, որում հայի մի ձեռքում սուրն է, մյուս ձեռ - քում՝ Սուրբ Գիրքը։

Մելիքի դեմ կռվից առաջ Դավիթը Հովանից իր հոր ձին և զենքերն է ուզում, այդ թվում և Խաչ Պատերազմին.

Տու՛ր ինձ Միերի Խաչ Պատերազմին։
Հրողբերն ասաց.— Ես չե՛մ կարնա տա,
Թե արժա՛ն ես՝ կը գա քո թևին,
Թե արժան չես՝ չի գա քո թևին։
Էդտեղ աստծու հրամանով
Խաչ Պատերազմին իջավ վեր աջ թևին։ (223)

Մելիքի դեմ կռվի գնալուց առաջ Դավիթը Աստծու անունն է տալիս։

Ձենով Հովանը կանչում է հորը ընկած Դավթին.
Ասաց.— Դավի՛թ, ու՞ր ես,
Հիշա՛, Մարութա բարձր Աստվածածին,
Հիշա՛ զԽաչ Պատերազմին,
Ինչ վեր քո աջ թևին,
Ու թա՛փ տուր քեզ… (236)

Դավիթը հորից դուրս է գալիս։ Ավելի ուշ Ձենով Հովանի ձայնին Փոքր Միերը կտա «ցեղի ձայն» բնորոշումը։

Դավիթը Մելիքին զարկում է երրորդ փորձից.
Կանչեց, ասաց .
—Յա՛ Մարութա բարձրիկ Աստվածածին,
Յա Խաչ Պատերազմին, ինչ վեր իմ աջ թևին։
Կանչեց, զարկեց Թուր Կեծակին։ (241)

Կարծում ենք՝ էպոսի երկրորդ ճյուղի վերջին հատվածը հայ տղամարդուն բնորոշ մեզ հայտնի երեք գործառույթի (տուն կառուցել, ծառ տնկել, երեխա ունենալ) ցայտուն վկայության օրինակ է։ Արմաղանը հղիանում է։ Միերը գնում է Սասունա սար ու մի «խաս բախչա» տնկում այնտեղ, անունը դնում է Ծովասար։ Դրա մոտ վանք է կառուցում, անունը դնում է Մարութա բարձր Աստվածածին։ Ծնվում է Դավիթը։ Միերը կառուցում է Աստծու տունը (այլ տուն կառուցելու հրամայական պահանջ և անհրաժեշտություն ուղղակի չկար), այգի (= ծառ) է տնկում և ունենում է իր զարմը շարունակող արու զավակ՝ Դավթին։ Սա մեր արժեհամակարգը բնորոշող էական հատկանիշ է և ոչ արդարացի կերպով անտեսված։

Հետաքրքիր է մեզ տրված այլոց բնութագրերը։

Իսմիլ խաթունը ասում է՝
Որ հաստակող են սասնեցիք։ (118)

Այս նույն միտքը ավելի ուշ կարտահայտի նաև Մըսրա Մելիքը։

Հետաքրքիր են խորհրդատու կնոջ և ռազմիկ կնոջ կերպարները։

Կորեկի Արտատեր Պառավը Դավթին ասում է.
Ինչ բան քեզ պետք կ՚ըլնի՝ կը գամ, կ՚ասեմ։ (245)

Հովանի կինը Դավթին ասում է, որ ինքը ցանկանում է Դավթին։ Դավիթը այդ մասին պատմում է Պառավին։ Վերջինս խորհուրդ է տալիս ամուսնանալ, որպեսզի այլ կանայք իրեն այլևս չանհանգստացնեն։ Սա մեր արժեհամակարգին բնորոշ այն հատկանիշն է, որը այսօր էլ պիտի կարևորել, այն է՝ լսել և հարգել մեծի խոսքը։ Էպոսը այս հարցում ազգություն չի ճանաչում։ Հիշենք արաբ ծերունուն։ Հովանը Չմշկիկ Սուլթանին է ընտրում որպես հարսնացու։ Չմշկիկ Սուլթանը և Դավիթը մատանիներով փոխանակվում են, բայց, Խանդութի գեղեցկության մասին իմանալով, Դավիթը հրաժարվում է իր նշանածից և որոշում է Խանդութին առնել։ Խանդութի մոտ գնալու ճանապարհին Դավիթը գիշերում է Չմշկիկ Սուլթանի մոտ։ Երբ Դավիթը փորձում է Խանդութի կուրծքը համբուրել, Խանդութը բռունցքով հարվածում է Դավթի դեմքին։ Վերջինիս բերանից արյուն է գալիս։ Հետաքրքիր է Խանդութի մեկնաբանութ – յունը.

Ասաց.— Դու քո հոր կտրիճն ես, ես էլ իմ. (265)

Գլուխ 2.
<<Սասնա ծռեր>> էպոսի հերոսները՝ որպես հայրենասիրության և ազգային արժեքների կրողներ

Ժողովուրդը իր հերոսներին չի ներկայացնում իբրև կատարելության տիպարներ: Միամտություն կլիներ կարծել, թե Սասնա հերոսները անթերի են : Ժողովուրդը չէր կարող դավաճանել իր բարոյական պատկերացումներին և անաղարտ լուսապըսակով պատկերեր իր իդեալների կրողներին (ինչը, ի դեպ, մենք այսօր անում ենք) : Այո՛, նրանք սովորական մարդիկ են, բայց անսովոր ուժով, ունեն գնահատելի և ընդօրինակման արժանի շատ գծեր, բայց ունեն նաև մարդկային թուլություններ և նույնիսկ պատժվում են դրա համար: Ժողովրդական իմաստությունը շեշտում է անհատների դերը, բայց կարմիր գծի պես անցկացնում է մարդկային անհատականությունից վեր գտնվող արժեքների կարևորությունը: Սա էական դաս է, որը, ցավոք, մեզանում դեռ կյանք չի առել: Մեր պարտքն է մատղաշ սենդին կրթել հերոսների հերոսականության ոգով՝ շեշտը դնելով նաև չափավորության և կուռքեր չսարքելու սկզբունքի վրա: Էպոսը կուռքեր չի հանդուրժում, եթե նույնիսկ նա Դավիթ լինի: Չնայած մեր հերոսները անթերի չեն, բայց նրանց հայրենասիրությունը էպոսում թերացումներ չունի:

Հայրենասիրությունը բարոյական բարձրագույն որակ է, սակայն այն չի ամփոփվում միայն առ հայրենիք ունեցած սիրով: «Սերը ոչ միայն հայրենիքի նըկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը: Եթե հայրենիքում ժողովուրդ չկա, ուրեմն հայրենիք չկա: Առանց հայրենիքի, առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է…»[19]: Այո՛, այսօր, ցավոք, մենք մոռացել ենք այս պարզ ճշմարտությունը: Մենք դադարել ենք իրար սիրել, դադարել ենք հոգ տանել միմյանց մասին: Դպրոցը, ուսուցիչը, ծնողը պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները, սերմանել նրանց մեջ հոգատար վերաբերմունք հայրենիքի, հայրենիքի հոգևոր մշակույթի և, իհարկե, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի նկատմամբ: Նրանք պարտավոր են երեխաների մեջ դաստիարակել նվիրական հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, «փաստացի օրինակ-ներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ»[20]: Այդ «փաստացի օրինակները» գտնում ենք մեր էպոսում:

Թևաթորոս թագավորը քառասուն տուն է տալիս, որ բնակեցնեն իրենց տանը: Այստեղ Սանասարի և Բաղդասարի առջև հարց է ծագում.

---

[19] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, 2005, էջ 348:
[20] Նույնը:

Սանասար ասաց Բաղդասարին.
— Առաջ զմեր բե՞րդ շինենք,
Թե չէ՝ զէդա աղքատ-ուղքատի տներ։
Բաղդասար պատասխանեց.
—Առաջ շինենք զէդոնց տներ,
Ու նոր շինենք զմեր բերդ.
Էդ խեղճ մարդեր չեն կարնա
Արևուն առջև կենա։
Ու սկսեցին զտներ։ (33)
Բերդը շինելուց հետո՝
Դարձան, փոքրիկ էկեղեցի մ՝էլ շինեցին։ (34)

Մարութա սարով մի գետ է անցնում.
Դավիթ ասաց.— Պետք է էսա գետին կամուրջ շինվի։
Թե չէ՝ մարդիկ տի գան, տի ընկնեն գետ։ (193)
Կառուցում է կամուրջը։ Անունը մնում է Դավթի կամուրջ։

Ուշագրավ է Հ. Օրբելու դիտարկումը. « … հերոսներից ոչ մեկը, նվազագույն չափով անգամ, չի օգտվում իր ունեցած հնարավորություններից, չի ձգտում հատուկ իրավունքներ ձեռք բերել իր շրջապատում, չի ցուցաբերում փառասիրության նշույլ անգամ, չի ձգտում իր կամքով տնօրինել այն հողը, որի համար նա պատրաստ է տալու իր արյունը, տնօրինել այն ջուրը, որը բոլոր դյուցազունների ուժի ակունքն է, ամբողջ ժողովրդի կյանքի հիմնական պայմանը …»[21] :

Սրա հետ կապված հետաքրքիր է Հովսեփ Օրբելու դիտարկումը Սասունցի Դավթի վերաբերյալ .«Զավթիչների նկատմամբ Դավիթը լցված է այրող ատելությամբ և ուզում է նրանց հաղթել, կոտորել, արտաքսել և ոչ թե փառաբանվել»[22]:

Դավիթը կոտորում է քառասուն դևերին, որոնք Միհերի մահից հետո ոսկի և արծաթ էին հափշտակել Սասունից, և գողացվածը բերում ու լցնում է Սասնա ամբարները, բայց՝
Դավիթ իր համար մենակ ձի մի առավ քարայրեն։ (178)

Սասնա հերոսների համար սեփական «աշխարհագրությունից» դուրս հայրենիք չկա։ Անգամ ժառանգման կարգով իրենց պատկանելիք (ուր մնաց զենքով նվաճած) հողը իրենցը չեն դարձնում, չեն ձգտում գահի և բարձրագույն իշխանության, որովհետև իրենց նպատակը դա չէ, հայրենիքն էլ զուտ հող չէ։ Իզուր չէ ասված՝ «Ուրիշի հողը քեզ հայրենիք չի դառնա»։

[21] Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 89-90։
[22] Նույնը, էջ 40։

Ուշագրավ է հետևյալ հատվածը.

Թագավոր դարձուց , ասաց.
—Ո՛րդի, ես տղա չունիմ,
Ես կը մեռնիմ, իմ թագավորություն
Ձեզ կը մնա, կ՝ըլնի ձեր տուն։
Ասին.— Չէ՛, թագավոր, ապրած կենաս,
Էկանք, ձեզի տեսանք,
Գոհություն աստծու, ողջ-առողջ եք,
Իրարուց կարոտ առանք, կ՝էրթանք մեր տուն։ (51)

Սանասարը հրաժարվում է իր պապի՝ Գագիկ թագավորի գահից և ցանկանում է վերադառնալ Սասուն։

Դավիթը Մըսրա Մելիքին սպանում է։ Դրանից հետո հետաքրքիր է Մելիքի մոր առաջարկը, բայց առավել հետաքրքիր է Դավթի արձագանքը.

Ապա մեր դարձավ Դավթին, ասաց.
—Դավի՛թ, սպանեցիր Մըսրա Մելքին,
Վնա՛ս չը կա, դու է՛լ իմ տղան ես։
Արի, էնոր կնիկ դու ա՛ռ,
Մըսրա թագավորություն մնա՛ քեզի,
Սասուն զաթի քո՛նն է։
Դավիթ ասաց.
—Ես մորե որ ծնվեր եմ՝ անարա՛տ եմ,
Ես իմ հալալ լեշ հարամ լեշերու չե՛մ խառնի։ (242)

Դավիթը Մըսրը տալիս է Մելիքի մորը, իսկ իր համար ոչինչ չի վերցնում որ-պես պատերազմի ավար։

Փոքր Միհրը քառասուն փահլևանների մարդակեր քրոջը սպանում է։ Վերջինս կերել էր իր հորն ու մորը և այդ ժամանակ թագավորում էր։ Քառասուն փահլևանները ասում են.

Որ դու էնոր սպանիր, մեզի ազատիր,
Կուզե՛ս, քաղքի թագավորություն առ,
Մենք քո ծառան մինչև օր մեռնելուն։
—Ես ձենե բան չեմ ուզի,
Ո՛չ թագավոր կ՝ըլնեմ,

Ո՛չ քաղքի տեր կ՝ըլնեմ։ (310-311)

Հ. Օրբելին գրում է. «Ժողովուրդն իր հերոսներին ներշնչել է այն մեծ իմաստությունը, որ մարդը պետք է լինի ճշմարտացի և միշտ հավատարիմ մնա իր տված խոսքին»[23]։

Սասնա հերոսների համար շատ կարևոր է տված խոսքը։ Ուշագրավ է հետևյալ հատվածը.

Միեր պատասխանեց.—Իմ տված խոսք — խո՛սք է.
……
Մենք էլ Սասնա կտրիճ փահլևան ենք։
Մեզ սուտ չկա. …… (105)

Իսմիլ խաթունը Մեծ Միերին կանչում է Մըսըր, որ գա ու իրեն առնի։ Հետա - քըրքիր է այլոց վերաբերմունքը այս հարցին։ Միերի արյունակից եղբայրը՝ Ձենով Հովանը, ասում է.

Քեզի տղա չկա—դու կաց քո տուն,
Աստված բալքի քեզ տըղա մի տա։ (116)

Հակառակ կարծիքին են ոչ արյունակից իշխաններն ու վարդապետները՝

Էտա հազըր տեղ է՝ շուտ գընա… Մըսըր տիրապետի։ (117)

Երբ Միերը պատրաստվում էր գնալ՝

Ձենով Հովան վազեց,
Կախվեց ձիու վզին, կուլա՛ր, կ՝ասեր.
—Մ՝է՛րթա, մ՝է՛րթա, էն անառակ խաբած է քեզ։ (117)

Բայց սրբազան ուխտը դրժել չի կարող Սասնա դյուցազունը, որովհետև՝

Ես հետ աստծու ուխտ եմ արել։
Թե որ չ՝էրթամ՝ էդ իմ ուխտի տակ տի մեռնեմ։ (117)

Թ. Տոնոյանը գրում է. «Հատկանշական է Մսըր գնալ-չգնալու խնդիրը քըն-նարկողների բնույթն ու պատճառաբանությունների կերպը»[24]։ Ձենով Հովանը դեմ է, որ Մեծ Միերը Մսըր գնա, քանի որ ինքը ձայն-կյանք-արյուն կրողն է և իր եղբորը

[23] Նույնը, էջ 98։
[24] Թ. Տոնոյան, Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը, Ստեփանակերտ, 2016, էջ 292։

պետք է ուղղորդի դեպի կյանք, որը հնարավոր է միայն սեփական «աշխարհագրության» սահմաններում, որը խախտել չի կարելի[25], որովհետև

Քեզի տղա չկա — դու կաց քո տուն,
Աստված բալքի քեզ տըղա մի տա։ (116)

Սեփական «աշխարհագրության» սահմաններում, որը խախտել չէր կարելի, Մեծ Միհերը կյանք է տալիս Մելիքին, ով հետո կդառնա Սասունին սպառնացող իրական սպառնալիք։ Հասկանալի է, որ Զենով Հովանի բերած հիմնավորումը շատ ավելի համոզիչ է, քան իշխաններինը և վարդապետներինը։

Երբ Դավիթը և Խանդութը միասին գալիս էին Սասուն, ճանապարհին՝ Խլա - թում, հանդիպում են Չմշկիկ Սուլթանին։ Վերջինս ուզում է Դավթի հետ մենամար - տել, քանի որ Դավիթը խախտել էր իր ուխտը, ուրացել էր իրենց նշանադրությունը (մատանիներ էին փոխանակել)։ Դավիթը ասում է, որ յոթ օրից կգա կռվելու։

Չմշկիկ Սուլթան ասաց.
—Դե՛, էրդըվցի՝ Մարութա բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմին վեր քո աջ թևին,
Ինչ յոթ օր լրանա,
Գաս հետ ինձ կռիվ,—
Որ թողնեմ դու էրթաս։
Դավիթ ասաց.— Մարութա բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմին, ինչ վեր իմ աջ թևին,
Ինչ յոթ օր լրանա,
Ես կը գամ, կռիվ անենք։ (278)

Խանդութը և Դավիթը գալիս են Սասուն և ամուսնանում։

Ինչ Դավիթ Խանդութ խանումի ծոց պառկավ,
Խաչ Պատերազմին, որ էրդում էր արե,
Մոռացավ։ (278)

Սասունում Միհերի դեմ կռվից հետո Դավիթը շորերը հանում է, որ լվացվի, արյունը մաքրի, ու հանկարծ՝

Կնիկ իրիշկեց՝ էնոր խաչ վեր թևին

[25]Տե՛ս Նույն տեղում։

Սնցեր էր ածուխի պես,
Էլաց, դժարացավ։ (286)

Դավիթը խախտել էր ուխտը, որովհետև յոթ օրվա փոխարեն յոթ տարի էր ան - ցել։

Ահա Դավթի խոստովանությունը.

Ես էրթմակոտոր եմ էլե,
Կնի՛կ, ես գնացի…(286)

Գետում լողանալու ժամանակ Դավիթը թունավոր նետով խոցվում է իր իսկ աղջկա կողմից։
Դավիթին ու Խանդութին տանում են Ծովասար, Մարութա վանքում թաղում։

Ձենով Հովանի կինը՝ Սառյեն, աչք էր դրել Դավթի վրա։ Դավթին կանչում է , որ լողանալու ժամանակ իր գլխին ջուր լցնի, Դավիթը իր մարմինը տեսնի, և Դավթի սիրտը մեղքով լցվի, բայց՝

Դավիթ աչքեր բռնեց,
Որ հրողբոր կնկան լեշ չը տեսներ,
Որ իր սիրտ չը մեղավորնար,
Ու էնպես ջուր լցրեց Սառյեի գլխուն։ (181)

Սա է բարոյականության և ընտանեկան արժեքների այն դավանանքը , որը բնորոշ է մեր ժողովրդին ու խտացված է դյուցազնավեպի ամենասիրելի և ամենա - գլխավոր հերոսի հոգում։

Դավիթը չի թողնում, որ Ծովասարում կենդանի սպանեն, որովհետև՝

Կապուկ տեղ պա՛պս էլ կը զարկի.
Տղամարդն է՛ն է, որ արձակի ու նո՛ր զարկի,
Չէ՞ որ էնոնք գերի են, հրողբեր,
Մարդ էլ գերին զարկի՞։ (185)

Սա մարդկային ազնվության լավագույն օրինակ է, որով մարմնավորվել է հայ ժողովրդի ազնվությունը։ Այդպես է, որովհետև Դավիթը հայ ժողովրդի հավաքական կերպարն է։

Եզրակացություն

1. «Սասնա ծռեր» էպոսը մեր ազգային-քրիստոնեական արժեհամակարգի կարևոր բաղադրիչ է։
2. Էպոսը աշխարհի արդի փուլում ի հայտ եկած համաշխարհայնացման գործընթացի պայմաններում ազգայինը պահելու կարևոր կռվան է։
3. Էպոսը մեզ ավանդել է բազմաթիվ պատգամներ, որոնք այսօր արդիական են, և դրանք պահելը անհրաժեշտ է մեր տեսակը («հայու տեսակը») պահելու համար։
4. Էպոսում ազգային-հայրենասիրական հարցերը հունցված են քրիստոնեական մոտիվներով։
5. Քրիստոնեական մոտիվները զուգադրված են հեթանոսական մոտիվների հետ՝ առանց իրար խանգարելու։
6. Էպոսը մեզ սովորեցնում, ինչ-որ տեղ նաև պարտադրում է պահել տված խոսքը և երդումը։
7. Էպոսը հորդորում է ամուր կառչել սեփական հողին և այլ վայրերում հայրենիք չփնտրել։
8. «Սասնա ծռեր» էպոսը հայրենի հողը և այդ հողը պահող ու շենացնող մարդուն սիրելու կոչ է։
9. Էպոսում շատ բարձր գնահատական է տրված ընտանիքին, օջախին։
10. Գովերգվում է աշխարհը շեն պահող աշխատանքը։
11. Էպոսը մեզ պատգամում է ունկնդիր լինել մեծերի խորհրդին։
12. «Սասնա ծռեր» էպոսը բարոյագիտական հանրագիտարան է։
13. Էպոսում կան ազնիվ, հայրենասեր հերոսներ, բայց չկան թերություններ չունեցող կուռքեր։ Էպոսը կուռքեր չի հանդուրժում։
14. Էպոսում կինը ոչնչով հետ չի մնում տղամարդուց. կարող է լինել տղամարդու նման իմաստուն, կարող է լինել մարտնչող ռազմիկ։
15. Մեր էպոսում հայ կինը արարող է և նման չէ այլ էպոսների կանանց, ովքեր դառնում են կռվի և կործանման պատճառ։
16. Էպոսը փաստում է հայ ժողովրդի անմահության հանգամանքը։

Օգտագործված գրականություն

1. Ամիրջանյան Յու. Ա. , Սահակյան Ա. Ս, Մանկավարժություն, 2005:
2. Գրիգորյան Գր, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980:
3. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, Հատոր ութերորդ, Երևան, 1999:
4. Հակոբյան Ս., Փիլիսոփայության դասընթաց, Երևան, 2005:
5. Հայ ժողովրդական հերոսավեպ. Սասունցի Դավիթ, Երևան, 1981:
6. Հայոց եկեղեցու պատմություն, Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2013:
7. Ստեփանյան Ա., Նազարյան Ա., Սաֆրաստյան Ռ., Համաշխարհային պատմություն. նորագույն շրջան, Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, 9-րդ դասարան, Մաս 2, Երևան, 2019:
8. Տոնոյան Թ., Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը, Ստեփանակերտ, 2016:
9. Օրբելի Հ., Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956: